

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՄԻ
ՍԿՋՐՆԱՂՔՅՈՒՐԻ ՄԱՍԻՆ

2. Ա. ՄԻՄՈՆՅԱՆ

Մովսես Խորենացու՝ իբրև հանճարեղ մտածողի և պատմագրի մեծագույն առանձնատկությունը պատմագրական սկզբնաղբյուրների մանրախուլջ ընտրությունն է, դրանց բացառիկ խոր, բազմակողմանի իմացությունը: Իրեն հայտնի մատյանների մեջ համապատասխան նյութ հայթայթելիս և այն ամենագործարար վերակերտելիս քերթողաշարը հետամուտ էր հարցերի մի ողջ խմբի, որի գաղափարական և գործնական կարևորությունը նրա համար անտարակուսելի էր:

Սա ընդհանուր խոսք չէ, առավել ևս՝ մեծերին տրվող հավուր պատշաճի չարտավորեցնող գնահատական, այլ բանասիրական հիմնավորումներ ունեցող եզրակացություն՝ խարսխված փաստական նյութի նկատմամբ պատմահոր բուն հայեցակետի քննության վրա: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ վերջինիս բնույթն է պարմանավորել է Խորենացու կերպարի ահագնությունը ոչ իբրև սոսկական պատմագրի, այլև ազգության հոգևոր և քաղաքական կյանքի ու գեղարվեստական մտածողության ծրագրային կազմակերպչի:

Ավելին, սեփական և այլ հնագույն ժողովուրդների պատմության խորունկ իմացությունը, յուրովի բյուրեղանալով և իմաստավորվելով նրա տիտանական մտքի խառնարանում, ներկայանում է մի նոր, անհամեմատ բարձր որակով՝ իբրև ապագայի կանխորոշում և ուղիների առաջադրում:

Մանոթանալով Մովսես Խորենացու ծրագրային գործունեությանը, դժվար չէ նկատել, որ սեփական ժողովրդի պատմությունը և իր ժամանակը համամարդկային փորձի ընդարձակ կոնտեքստում իմաստավորելու նրա ընդհանուր ձգտումը իր շատ կողմերով կոնկրետանում է պատմահոր հայտնի նախասիրության՝ հելլենական պատմամշակութային ժառանգության յուրովի անդրադարձումով: Հունաստանի պատմության ծալքերում նա նպաստավոր գուգահեռներ է գտնում իր քաղաքական իդեալի հաստատման համար: Այս իմաստով ավելի քան բնական պետք է համարել իր քաջածանոթ աղբյուրներին ու կերպարներին, տվյալ դեպքում՝ հին աշխարհի սևծագույն գործար և ափսոսանք գործիչ Ալեքսանդր Մակեդոնացու կյանքին ու գործին: Այս իրողությունն ունի պատմական խոր հիմքեր: Ալեքսանդրի անունը անծանոթ չէր հա՛մարդուն: Հիշեցնենք, որ աշխարհակալի նկատմամբ նրա սերը փոքր-ինչ այլ ևրանգավորում ուներ¹, քանի որ, ինչպես իրավացիորեն նկատված է, «Ալեքսանդրի ընկալման բնույթը պայմանավորված է ազգային և քաղաքական հանգամանքներով և, իհարկե, փոխոստիպական որոնումներով»²: Հայաստանում նա ավանդաբար ընկալվում էր իբրև մոլորվորդներին պարսկական լծից ազատագրող հերոս: Հայերի մտապատկերում դեռևս թարմ էին հիշողությունները սասնավորապես Ալեքսանդրի և Դարեհ III-ի ճակատամարտերի և հունամակեդոնական ռազմական մեթենայի հարվածներից ավելի քան երկուհարյուրամյա Աքեմենյան զորեղ պե-

¹ Е. Э. Бертельс. Роман об Александре и его главные версии на Востоке. М.—Л., 1948, с. 3.

² Е. А. Костюхня. Александр Македонский в литературной и фольклорной традиции. М., 1972, с. 7.

տույթյան կործանման մասին, որոնք յուրովի բեկվել են հայկական բազմաթիվ զրույցներում և բանահյուսական այլ նյութերում: Խորենացու ժամանակաշրջանն իր սրբագրումներն ու լրացումներն էր մտցրել Ալեքսանդրի կերպարի ընկալման մեջ՝ նրան դիտելով իբրև պետական-քաղաքական անկախության, հայրենի երկրի հզորացման ու բարգավաճման, նրա հոգևոր ծաղկման ջատագով:

Խոսքը, մասնավորապես, վերաբերում է մ. թ. ա. III—մ. թ. III դդ. ձևավորված «Աղեքսանդր Մակեդոնացու պատմություն» հունարեն հաճախ ծանոթ երկին, որը ժամանակին վերագրվել է Կալիսթենես Բիստրիցիոսին, իսկ այսօր ավանդաբար ներկայացվում է Կեղծ-Կալիսթենես (Pseudo-Callisthenes) պայմանական հեղինակի անունով: «Աղեքսանդր Մակեդոնացու պատմություն» կամ «Աղեքսանդրի վեպը» հայ ընթերցողի սիրված գիրքն էր ողջ միջնադարում՝ V դարից մինչև XIX դարը ներառյալ: Այն հայ թարգմանական գեղարվեստական արձակի անդրանիկ հուշարձանն է, որը մեզ հասնում իր շուրջ 1500-ամյա ստեղծագործական կյանքի ընթացքում հայ միջնադարյան հեղինակների կողմից հայկականացվել է, կրել է գեղարվեստական բարդ փոխակերպումներ՝ դառնալով ազգային մատենագրության անկապտելի օղակ, հայկական միջնադարի մշակութային համակարգի բաղադրամաս: Ավելին, իր ակունքներով փոխառյալ այս հուշարձանը, անդրադարձ կապով ազդելով ժամանակի դրական-հասարակական միտությունների վրա, յուրովի խթանել և ուղղություն է տվել վերջինիս պահանջներին, ճաշակին ու մղումներին՝ դրանք թեմատիկ, ժանրային, ոճական ամենալավագույն դրսևորումներ գրականության մեջ:

Մովսես Խորենացու ստեղծագործական առնչությունները մարդկային քաղաքակրթության կերտած պատմամշակութային այս հնագույն հուշարձանի հետ ոչ պարզ են, ոչ միանշանակ: Դեռևս մեր դպրության արշալույսին նա ոչ միայն թարգմանաբար հայ ընթերցողի սեփականությունը դարձրեց իր կենսահաստատ հերոսական ոգով, բարոյական սուր հարցադրումներով, գաղափարական և գեղարվեստական կուռ համակարգով, թեմատիկ լայն ընդգրկմամբ, հետաքրքրաշարժ սյուժեով, մարդկային կյանքի իմաստավորման անսքող միտումով հատկանշվող այս դասական երկը, այլև նրանից ստացած գաղափարագեղարվեստական ազդակները ինքնահատուկ ձևով վերամշակման վրեժից իր «Հայոց պատմությունը» շարադրելիս:

Բանասիրորեն ապացուցված է, որ Աղեքսանդրի պատմությունը Մովսես Խորենացու «Հայոց պատմության» սկզբնաղբյուրներից է: Այս հուշարձանների աղբյուրները, սակայն, չեն սահմանափակվում կոնկրետ երկու զրբերի շրջանակում, այլ ամենատարբեր ձևերով տարածվում են հայ միջնադարյան մատենագրության հետագա ողջ ընթացքի վրա: Ստեղծվել էր մի վիճակ, երբ «Հայոց պատմությունը» իր հերթին դարձել էր մի երկրորդ՝ միջնորդ սկզբնաղբյուր, անկախ Աղեքսանդրի վեպի հրապարակի վրա եղած թարգմանությունից, վերջինիս հետագա տարածման համար: Այս բանը Աղեքսանդրի պատմության և հայ պատմիչների ու հետագայի այլ հեղինակների (Ղազար Փարպեցի, Թովմա Արծրունի, Սեբեոս, Հովհաննես Դրասխանակերտցի, Ստեփանոս Ասողիկ, Խաչատուր Կեչառեցի, Հովասափ Սեբաստացի և այլք) երկերի միջև տարվող կոնկրետ զուգահեռների միջոցով հավաստվում է սկսած դեռևս XIX դարի առաջին տասնամյակներից:

Հետևաբար, Աղեքսանդրի պատմության՝ իբրև թե՛ թարգմանության առարկա երկի, թե՛ «Հայոց պատմության» սկզբնաղբյուրի խորենացիական կրկնակի ընտրությունը և գնահատությունը պատմահոր սոսկ անհատական նախասիրության խնդիր չէ: Այն պետք է դիտել հասարակական անհրաժեշտության տեսանկյունից որպես արձագանք համազգային խնդիրների և մտավորական մի ողջ խավի դավանած փիլիսոփայական-քաղաքական մտա-

հայեցություն: Ալեքսանդր Մեծը հայկական միասնական պետության ջատագով Խորենացու համար օրինակելի միապետի փոխառել էր, իր սիրած հերոսների նման՝ Հայկ, Արամ, Արա, Տիգրան, իմաստություն, քաջության, ժողովրդասիրության շահանիշ, իսկ աշխարհակալի կյանքն ու գործն ավանդող երկի բովանդակությունը՝ ուսանելի իբրև ժողովրդի փորձ և պատմության դաս: Այս կետում էլ պետք է փնտրել Ալեքսանդրի նկատմամբ Խորենացու հատուկ վերաբերմունքը, որի մասին մի հարյուրամյակ առաջ հայ բանասերներից մեկն ասել է, թե «Խորենացին կսիրե Ալեքսանդրի աշխարհակալությունն և շատ տեղ կհիշե»³:

Խորապես համոզված, որ Կեղծ-Կալիսթենեսի երկի հետ Խորենացու դրսևեորած գաղափարական-ստեղծագործական առնչությունները⁴ նոր լույս են սփռում պատմահոր կերպարի վրա, մենք ստորև կանդրադառնանք դրանցից սոսկ մի քանիսին, որ, մեր կարծիքով, ուշագրավ են սկզբնաղբյուրների նկատմամբ Խորենացու վերաբերմունքի և «Հայոց պատմության» որոշ մշուշոտ կետերի պարզաբանման առումով:

Արդ, ո՞րն է փաստերի պնդատության Խորենացիական շահանիշը: Պատկերավոր ասած, Խորենացին որևէ դեպք, տեղեկություն, կերպար կամ արարք կշռում է երկու անգամ. նախ արձանագրում է փաստն ինքնին, նրա իրական, այսպես ասած, նյութական կողմը իր դրսևորման բուն ոլորտում, հետամուտ լինելով նրա բոլոր կողմերի ստույգ և ճշմարիտ բացահայտմանը, երկրորդ անգամ որոշում է, այսպես կոչված, «փաստի հոգեբանությունը», նրա բարոյական կշիռը մարդու էթիկական, ազգային-պետական շահերի տեսանկյունից՝ ելնելով նրա հասարակական օգտակարության գործունից: Նման երկկողմանի քննությունից հետո արձանագրված փաստը կամ տվյալը հաճախ ձեռք է բերում կրկնակի արժեք՝ իբրև դաս և պատգամ: Օրինակ, երիտասարդ տարիներին լինելով Հունաստանում և տեղում լավագույնս ուսումնասիրելով այդ երկրի ներկան ու անցյալը, մասնավորապես նրա նշանավոր զավակի՝ Ալեքսանդր Մեծի կյանքն ու աշխարհակալությունը, հետագայում թարգմանելով հանրահայտ Ալեքսանդրի պատմությունը, նա անսխալ կողմնորոշվում է վերջինիս անվան հետ կապված բազում պատմագրական և բանահյուսական նյութերի մեջ՝ հարկ եղած դեպքում ընթերցողին ևս նրբորեն մղելով դեպի ճշմարիտը: Այս առումով հատկանշական է «Հայոց պատմության» Բ գրքի ԺԳ գլխում առկա «Նեքտանեբոս այս վերջին թագաւոր է եգիպտացոց ի Մանեթոսէ պատմեալ, զոր ոմանք հայր Ալեքսանդրի ասեն» դարձվածք, որը ի մոտո հիշեցնում է Ալեքսանդրի պատմության բնագրի երկրորդ նախադասության սկզբածքը. «Քանզի ասեն Նեգդանեբոս վերջին թագաւոր Եգիպտոսի...» և հաջորդ էջերում հանգամանորեն ավանդվող առասպելը Ալեքսանդրի՝ Նեգդանեբոսից սերվելու մասին⁵: Ուրեմն, առնվազն գրավոր երկու աղբյուրից հայտնի (չհաշված ուսումնառության տարիներին Ամոն-Նեգդանեբոս աստծու պաշտամունքային գրվածքավոր կենտրոններից մեկում՝ Ալեքսանդրիա քաղաքում ամենայն հավանականությամբ լսած) այս հանրահայտ զրույցի հանդեպ պատմահոր վեհաբերմունքը պետք է որ անվերապահ դրական լիներ: Այնուամենայնիվ սի-

³ Ա. Սուքրյան. Երեսնամյա պատերազմ ի Հայս և կատարած Արշակայ արքային.— «Բազմավեպ», 1878, Ա, էջ 7:

⁴ Այդ առնչությունների կոնկրետ դրսևորումների մասին տե՛ս Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ. հայկական խմբագրություններ, աշխատասիրությամբ Հասմիկ Սիմոնյանի. Երևան, 1989:

⁵ Նեգդանեբոս փարավոնը, որ նաև նշանավոր քուրմ էր, հաճախ նույնացվում էր Ամոն աստծու հետ: Եգիպտացիներին կամովին ծնկի բերելու քաղաքական հեռահար նպատակ հետապնդող ավանդություններից մեկում, որ բերվում է Ալեքսանդրի պատմության մեջ, Նեգդանեբոսը Ալեքսանդրի մորը՝ Օլիմպիադային ներկայացավ Ամոնի կերպարանքով և խաբեությամբ նրան մղեց կենակցության:

րսծ հերոսի առասպելական-աստվածային ծագման տարածված վարկածի նկատմամբ հորենացու բացահայտ թերահավատությունը վերը բերված տողերում անթաքույց է: Իմ իզուր չէ, որ նրա «խոսելու այս կերպը» գերմանացի գիտնական Յ. Ջուխերի ե Զ. Տաշյանի կողմից մեկնարանված է իբրև մեկն այն դեպքերից, երբ պատմահայրը, իրավամբ, առասպելին պատմական իմաստով կարևորություն չի տվել: Պարզվում է, որ հորենացուն ավելի հարազատ էր անտիկ պատմագրության թեղը, որը նշում է Ալեքսանդրի իրական ծնողներին, նրանց զարմը բերելով Հունաստանի խոր անցյալից. «Ալեքսանդրի Մակեդոնացու, որդույ ֆիլիպպեայ և Ոլոմպիազայ, որ էր քսան և չորրորդ յԱքիդայա»⁷:

Աղբյուրներից օգտվելու հորենացու եղանակը ենթադրում է դրական սկզբնաղբյուրի և սեփական աշխարհիմացության յուրատեսակ համադրություն, երբ յուրաքանչյուր վկայություն ստուգվում է հանգամանքների իրական կացությամբ: Ավելորդ է ասել, որ նման լուծումը ենթադրում է նաև գիտելիքների և կենսափորձի մեծ պաշար, որ հատուկ է պատմահորը: Եվ, հաճախ, «Հայոց պատմության» ամենագեղարվեստական, բայց և ամենաբազմաշերտ, այլառացություններով շղարշված դրվագներից մեկը՝ Ալեքսանդրի քաղաքի նկարագրությանը նվիրված հանրահայտ կտորը, մասնավորապես ստորև բերվող հատվածը, նման լուծման փաստացի վկայությունն է. «Սորա առաջի այժմ ոչ անցեալ նստի Պոտոնիոս հինգակատար գագաթամբն, դանսպառ աշխարհ պատելով, այլ Մարկոս աւետարանական քարոզութեամբն, և ոչ վիշապազին գիւցազնակաց գերեզմանք, այլ սրբոցն վայելչանան վկայարանք: Եւ ոչ ի քսան և հինգն Տուբի՝ տօնի աղճատանք, զբռնաբարձս պսակելով զրաստս, և պաշտօն տանել լորտուաց, և աթերաց առնել բաշխումն, այլ ի մետասան նորին Տուբի՝ յայտնութեանն Տեառն կատարի տօն. զյաղթող նահատակս գովել, և օտարաց առնել ընդունելութիւն և յաղթատս տուրս: Եվ ոչ զոհել շար դիւին Սարապեայ, այլ զՔրիստոսի արեւն մատուցանել պատարագ. և ոչ խնդրել հրաման պատասխանել ի Սանդարամետէն Պրոդէիադայ, այլ ուսանել զգորութիւնս պէսպէս իմաստից ի նօրն Պոստոնէ...»⁸:

Այս հատվածը ուսումնասիրողների կողմից չի անտեսվել. նկատվել է նրա հորինվածքային գեղեցկությունը և կապը Ալեքսանդրի պատմության հետ, որի համապատասխան տողերը բնագրային հաջորդականությամբ բերվում են ստորև. «Եւ զոհք մատչեն նմա իբրև վիշապազին: Եւ պսակեն և զգրաստս ամենայն բռնաբարձս...: Ուստի մինչև ցայժմ այս արեւն պահին առ աղեքսանդրացիս՝ ի Տուբի քսան և հինգ զբռնաբարձ գրաստս ամենայն: սյսակել և զոհս մատուցանել աստուածայինն և պաշտաւնս կրել լորտուացն, որ խնամ տաւին տանն, և բաշխումն առնել աթերացն...: Խնդրէր և զՍարապեան տաճարն ըստ հրամանի պատասխանել...: Շինեա քաղաք նշանաւոր Պրոդէադա կղզոյ, որոյ առաջոյ անցեալ նստի Պոտոնիոս, հինգակատար գագաթամբք զանսպառ աշխարհ պատելով»⁹:

Բանասերների կողմից մասնավորապես շեշտվել է այն հանգամանքը, որ քաղաքին լավ ծանոթ և երիտասարդական տարիներից նրա մասին քաղցր հուշեր պահպանած հորենացին այն նկարագրելիս դարձյալ իօրև օժանդակ սկզբնաղբյուր ձեռքի տակ ունեցել է Ալեքսանդրի վեպը՝ բառացի մեքեբերումներ անելով նրանից¹⁰:

6 Զ. Տաշյան. Ուսումնասիրութիւնք Ստոյն-Կադմոնեայ Վարուց Ալեքսանդրի վիեննա, 1892, էջ 74, հմմտ. Պատմութիւն Ալեքսանդրի Մակեդոնացու, էջ 513:

7 Մովսէս Խորենացի. Հայոց պատմություն, գրքեր Բ, գլուխ Ա:

8 Մովսէս Խորենացու Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Մ. Աբեղյան և Ս. Յարութիւնեան. Տփլիս, 1913, էջ 345—346:

9 Պատմութիւն Ալեքսանդրի Մակեդոնացու, էջ 131—132:

10 Մովսէս Խորենացու Հայկական պատմութիւն. Ս. Պետերբուրգ, 1889, էջ 274:

Ցարդ, սակայն, պատշաճ ուշադրության չի արժանացել մի կարևոր հանգամանք՝ այս մասնավոր դեպքում Խորենացու մեջբերման բուն կերպը, որ աննախադեպ է մի շարք առումներով: Նախ և առաջ, նախօրինակի նախադասություններն այստեղ փոխակերպված են ժխտական բնույթի, ստանալով իրենց նախնական բովանդակությանը լիովին հակառակ իմաստ՝ «Չանցնալ նստի Պողոտենիոս, ոչ վիշապաղին դիցազնակաց գերեզմանք, ոչ ի քսան և հինգն Տուբի, ոչ զոհն շար դիւին Սարապեայ, ոչ խնդրել հրաման պատասխանոյ»: Այս փոխակերպման ներքին իմաստը, անշուշտ, չպետք է փնտրել պատմահոր սոսկ ոճական համակարգում, ինչպես անում է, օրինակ, Ստ. Մալխասյանը, բավարարվելով նկատել, թե «Խորենացին Ալեքսանդրիայի նկարագրության մեջ գործ է ածում հակադրություն կոչված ճարտասանական ձևը, մեջ է բերում այդ քաղաքի հեթանոսական ժամանակներին պաշտամունքները, և նրանց հակադրում է ժամանակի քրիստոնեական պաշտամունքները»¹¹: Նման մոտեցման արդյունքը կլինի սոսկ ձևական պատասխան, որը ոչինչ չի տա օգտագործած սկզբնաղբյուրների նկատմամբ պատմահոր բուն վերաբերմունքը պատկերացնելու առումով: Իբրև մտածող Խորենացին ունի խորադնա բազմաշերտ ծալքեր, որ ի հայտ են գալիս ոչ միանգամից, այլ տակավ առ տակավ, նրա ստեղծագործության առանձին օղակների ու հանգույցների երկկողմանի քննությամբ:

Եվ, ահա, ուսումնասիրողին, բնականաբար, հետաքրքրում է այն իրական դրդապատճառը, որով թելադրված է Խորենացու բացահայտ բանավիճայն: Խորենացու խնդր առարկա հատվածում: Դիմենք Աղեքսանդրի պատմությանը, որին ծանոթ յուրաքանչյուր ոք կարող է հավաստել, որ այստեղ Ալեքսանդրիա քաղաքի էջեր զբաղեցնող հանգամանալից նկարագրությունը ստեղծագործության գաղափարական առավել զորեղ շեշտեր կրող հատվածներից է: Իզուր չէ, որ նրանում եգիպտական կրոնի, մանավանդ, Ալեքսանդրիայի կուրքերի մասին բազմաթիվ հետևողական ակնարկությունները, եգիպտական Ամոն աստծուն Ալեքսանդր Մակեդոնացու կողմից զոհեր մատուցելու ու երկրպագելու և, վերջապես, Ալեքսանդրին Ամոն աստծու որդի հռչակելու և նույն տեղում Ալեքսանդրի բազին կառուցելու պատմությունները, համաձայն այլ իրողությունների հետ, եվրոպացի մասնագետներին դրել են նշմարելու նրանց գաղափարական միտվածությունը և, հատկապես, Ալեքսանդրիայի հետ վեպի ակնառու կապը ու նրանում դրսևորված «Եգիպտական հայրենասիրության թեման»¹²: Եվ բնական ու հասկանալի են այն ներհակ ապրումները, որ եզացած պետք է լինեն հունական կողմնորոշման ջատագով և քրիստոնեական վարդապետությամբ տաքորված Խորենացին՝ այս երկը և, մանավանդ, նրա այն հատվածները թարգմանելիս, որոնցում փորձ է արվում Հելլադայի պատմության մեջ իր ամենասիրելի կերպարին, իր իդեալ արքային կտրելու բնական ակունքներից և կապելու օտար աշխարհի հետ¹³: Սակայն ինչպես այլ դեպքերում, այստեղ ևս քերթողահայրը, հավատարիմ իր որդեգրված թարգմանչական սկզբունքին՝ անտեսում է կրոնական հանգամանքն ու անհատական ամեն մի նախասիրություն: Արվեստագետի սթափ զգացողությամբ նա միջամուխ չի լինում Աղեքսանդրի պատմության շարադրանքին՝ տալով նրա ճշգրիտ և գեղեցիկ թարգմանությունը: Այնուամենայնիվ, ժամանակ անց, ձեռնարկելով «Հայոց պատմության» ստեղծմանը, երբ արդեն իբրև պատմագիր սեփական դիրքորոշումն արտահայտելու անհամեմատ մեծ հնարավորություն

¹¹ Մովսես Խորենացի. Հայոց պատմություն. Երևան, 1981, էջ 389:

¹² Античный роман. М., 1969, с. 211.

¹³ Նման ակնարկներ, որ Աղեքսանդրի պատմությանն անծանոթ ընթերցողի համար կարող է մութ մնալ, «Հայոց պատմության» հրատարակողից, բնականաբար, պահանջելու է հատուկ բացատրություն:

ուներ, նա ավելորդ չի համարում անդրադառնալ նաև այս խնդրին՝ դավանարանական-դադարափարական հիշյալ հակամարտությունն իբրև հեռակա բանավեճ յուրահատուկ եղանակով տեղափոխելով «Հայոց պատմության» էջերը: Եվ ահա հեթանոսական շրջանի քաղաքին իր «աղտաճանր» տոնե-րով և Սարապիս «դիւի» պաշտամունքով, նա հակադրում է սեփական աշ-սերով տեսած և իմացած դրախտային Ալեքսանդրիան՝ քրիստոնեական ներկայով, կրոնական արարողություններով, պեսպես գիտությունների ծաղկու-մով և այլն: Անշուշտ, այստեղ պետք է տեսնել նաև Ալեքսանդրի պատ-մությունը հեղեղած այս և համանման հրաշապատում, հեթանոսական ֆանտաստիկ, հեթաթային պատկերների նկատմամբ խորհնացու առհասա-րակ մերժողական վերաբերմունքի հեռավոր արձագանքները: Ավելին, այս-տեղ թերևս առկա է նաև պատմահոր բնավորության յուրահատկությունը՝ «օտարոտի բաների վրա ունեցած ատելությունը», որ «հայրենասիրության», «աղգայնության ոգու» կողքին դիպուկ նշմարում է վիկտոր Լանգուան¹⁴: Մեծ մտածողը թեպետ չէր անտեսում նման հորինվածքների գրավչությունը աշխարհիկ պատմությունների ծարավ ընթերցողի համար, սակայն առաջ-նային էր դիտում աշխարհահռչակ այս երկի հերոսական ոգին, նրանում դրսևորված քաղաքական միտումն ու պետականության գաղափարի շեշտ-ված առկայությունը, որ և ինքը անհրաժեշտ էր համարում փոխանցել սեփական ժողովրդին նրա պատմության բեկումնային շրջանում:

Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ «Հայոց պատմության» քն-նարկվող հատվածը, որքան էլ արժարժված և լուսաբանված ուսումնասի-րողների կողմից, այսօր էլ ունի մութ կետեր, որոնք պահանջում են բա-նասիրական-ալբյուրստիկական կոնկրետ բացատրություն: Ահա դրանցից մեկը. առ այսօր, օրինակ, պարզ չէ, թե ինչ պետք է հասկանալ «Պրոդէիադ» անվան տակ «եւ ոչ խնդրել հրաման պատասխանելու ի Սանդարամետէն Պրոդէիատայ, այլ ուսանել զգորութիւնս պեսպէս իմաստացի ի նօրն Պա-տոնէն» ուրձվածում: Առաջին հայացքից դժվար է նույնիսկ կողմնորոշվել տեղանուն է սա, թե՞ անձնանուն: Դիմենք բառիս մեկնաբանության փոր-ձերին: Մկրտիչ էմինը «Հայոց պատմության» մոսկովյան կրկնակի՝ 1858 թ. և 1893 թ. հրատարակություններում, չթաքցնելով, որ իր համար «դժվար է ճշտությամբ որոշել, թե հատկապես որ աստվածությունը նկատի ունի հեղինակը», փորձում է, այնուամենայնիվ, ներկայացնել այն իբրև Սերա-պիս (Սարապիս) աստվածության երկրորդ՝ հունարեն անունը, հոմանիշ՝ Պլուտոնի¹⁵: Ֆրանսիացի հայագետ Սեն-Մարտենը ևս չ' տալիս հարցի պատասխանը, «Հայոց պատմությանը» նվիրված իր վերլուծության մեջ խոստովանելով, որ չգիտե նաև «Պրոտեիադ» բառի մակդիր դիտվող «սան-դարամետայէտ» (որոշ հրատարակություններում՝ սանդարամետ—Չ. Ս.) բառի ակունքը կամ արմատը¹⁶: Խորեն Ստեփանեն ևս, որ «Հայոց պատ-մության» աշխարհաբար թարգմանությունը իրագործելիս, ի թիվս հայկա-կան հրատարակությունների, ձեռքի տակ է ունեցել նաև երկի ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, ռուսերեն ղանազան թարգմանություններ՝ իրենց ծանոթագրություններով, ինչպես և հրապարակի վրա եղած բազմաթիվ ուսումնասիրություններ, փաստորեն կրկնում է Մ. էմինին, խնդրը ըստ էության թողնելով չլուծված: Ստեփան Մալխասյանը, շունենալով հարցի սեփական պատասխանը, բառը ծանոթագրելիս հիշեցնում է էմինի և մյուս-ների առաջադրած ելքը՝ Սերապիս—Պրոդէիադ—Պլուտոն հոմանիշների ձևով, սակայն կասկածի որոշ երանգով վերապահություն է անում, ասելով. «Բայց

¹⁴ Մովսէս Խորենացի եւ նրա պատմութիւնը, աշխատութիւն վիկտոր Լանգուայի. Տըփ-իս, 1863, էջ 20:

¹⁵ История Армении Монселя Хоренского, первый перевод Н. О. Эмина. М., 1893. с. 282.

¹⁶ Նույն տեղում:

Baill-ի բառարանում բառ չկա Պրոդիադը հիշեցնող¹⁷։ Նկատելով, որ Աղեքսանդրի պատմության մեջ հիշվում է «Պրոդիադա կղզի» անունը, զիտնականը գտնում է, որ, թերևս, կարող է «լինել մի մեհյան այդ կղզու վրա»¹⁸։ Եվ, վերջապես, Հ. Տաշյանն Աղեքսանդրի պատմության առնչությամբ հպանցիկ նկատում է, որ նրանում առկա հիշյալ «Պրոդիադան» կղզու անվանում է¹⁹։

Աշխարհի տարրեր ձեռագրատեսերում պահվող շուրջ 70 ձեռագրերի հիման վրա պատրաստելով Աղեքսանդրի պատմության հայկական խմբագրության գիտաբնական բնագրերը, հնարավորություն ենք ունեցել փաստական հարուստ հիմքի վրա տեսնելու նաև հուշարձանի հունա-լատինական տեքստերի կերպափոխությունները հայկական, վերստին։ Այդ կերպափոխությունները խրեց բնութիւն հիմնականում ներկայացնում են այն մոդելը, որ հատուկ է թարգմանական երկերին առհասարակ՝ հատուկ անունների տեղայնացում, սխալներ բնագրի ոչ ճիշտ ընթերցման հետևանքով, անծանոթ անվանումների գրչական աղավաղում, թարգմանական շփոթություններ թեք հոլովաձևերը բառի ուղիղ ձև ներկայացնելու՝ յուրատեսակ տրանսլիտերացիայի ձևով և այլն։ Դիմելով հուշարձանի հայկական խմբագրության հետ հունարեն ամենամերձավոր բնագրերին՝ Կ. Մյուլլերի և Հ. Մոյզիսի հանրահայտ հրատարակություններին, երկու դեպքում էլ մեզ հետաքրքրող Պրոտեիադ (կամ Պրոդիատ) բառի դիմաց տեսնում ենք Πρωτεύδα—Պրոտէիդա, որը Πρωτεύς—Պրոտէս բառի ածականացված ձևն է (նախաբնագրում՝ τῆν Πρωτεύδα)²⁰։ Ավելին, IV դարում ձևավորված հուշարձանի լատինական տարբերակը ևս նույն կոնտեքստում հաստատում է բառի ուղիղ ձևը Proteus tel-lus (Պրոտէսի Երկիր) կապակցությամբ²¹։

Ուրեմն հայերենում կատարված է կրկնակի խաթարում. նախ «Պրոտէիդան» դարձել է Պրոդիադ (Պրոդիադայ), ուր կարող է դիտվել որպես անծանոթ բառի գրչական սխալագրություն, և ապա՝ գրադարձությամբ բառի ուղիղ ձև է վերցվել նրա թեք հոլովաձևը²²։ Համապատասխանաբար հայերեն ճիշտ ձևը կլինի «Պրոտեայ կղզու» փոխանակ «Պրոդիադայ կղզու»։ Դժվար չէ ենթադրել, որ Խորենացին թարգմանական այս անհարթությունը նույնությամբ փոխանցել է և «Հայոց պատմություն»՝ ակամա ստեղծելով ևս մի առեղծված իր մեկնիչների համար։ Բարեբախտաբար, Աղեքսանդրի պատմության թարգմանությունը քանիցս այլ դրվագներում պահպանել է և բառի ուղիղ ձևը, որի հետ Պրոդիադի կապը զարմանալիորեն չի նկատվել։ Դրանք են.

1. Խնդրեալ հարցանէր թէ զո՞ր կղզի արդեաւք ազդիցէ զՊրոտէսն²³։

2. Սա Փարոս կոչի, բայց Պրոտէս ի սմա բնակեցայց, և շիրիմն Պրոտէայ է առ մեզ՝ պաշտման արժանի եղեալ²⁴։

¹⁷ Մովսես Խորենացի. Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 390։

¹⁸ Նույն տեղում։

¹⁹ Հ. Տաշյան. Ուսումնասիրությունք..., էջ 48, ծան. 3։

²⁰ C. Müller. Arriani anabasis et indica. Paris, 1846, p. 31; Pseudo-Callisthenes nach der Leidener Handschrift herausgegeben von Heinrich Meusel. Leipzig, 1871, S. 72b.

²¹ C. Müller. Arriani anabasis et indica, p. 31.

²² Վերջ տալիս է թարգմանական համանման երևույթների այլ օրինակներ ևս. հայկական բնագրերում հանդիպող «Աղեքսանդրէ», «Անտիգոնէ», «Փիլիպէ» բառերը հունարեն կոչական հոլովաձևեր են ուղղականի կիրառությամբ, «Կեստան» նախաբնագրի «Կէստէն» է, «Ղկատիսոսը»՝ «Կէստէս»-ը, «ի Սպարիադան»՝ «Կէստէս»-ի կերպափոխված ձևը և այլն։

²³ Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացու, էջ 126։

²⁴ Նույն տեղում, էջ 129։

3. Շինե՛ա քաղաք նշանաւոր ղեր ի վերայ Պրոտեայ կղզոյն²⁵:

Ուրեմն, խոսքը Պրոտէս (Պրոտես) անունով մեկի մասին է, որը բընակվել և ապա թաղվել է Փարոս կղզում: Որ Փարոսը, իրոք, նույն Պրոտեսի բնակավայր կղզին է եղել և, հետևաբար, փոխանունությամբ հաճախ կոչվել է Պրոտեսի կղզի, անուղղակիորեն կրկին հաստատվում է Աղեքսանդրի պատմության հունարեն մյուլլերյան ձեռագրերի հետ հայկական բնագրի ստորև բերվող զուգադիր քննությամբ:

Մաշտոցի անվան Մատենադարանի № 5472 («Սոս օրինակ») ձեռագրի 53-րդ էջում՝ դարձյալ Ալեքսանդրիա քաղաքին նվիրված հատվածում կարդում ենք. «Եւ զարաւարին հրաման տալի նաւել և կալ մնալ յայնմ տեղոց, որ ասի Փարիտիս կղզի» (Փարիտիսը «Փարոս» բառի հունարեն թեք հոլովածն է՝ աղավաղված—Հ. Ս.): Եվ ահա հուշարձանի հունարեն հնագույն՝ Ալեքսանդրյան բնագրախմբի լավագույն գրչագրում (Փարիզի ազգային մատենադարան, ձեռ. № 1711) «Փարիտիսի» փոխարեն նույն գրվագում կարդում ենք «Պրոտեսի կղզի» համարժեքը՝ «Προτεσος νησος»:

Պարզվում է, որ հայերեն «Փարիտիսը» այս դեպքում ուղղակի սերում է հունարեն մեկ այլ նշանավոր ձեռագրից՝ Փարիզի ազգային մատենադարանի, № 1685 գրչագրից, որը հայերենին համընթաց տալիս է «Προτεσος νησος»:

Արդ, ո՞վ է Պրոտես-Պրոտէսը և ի՞նչ կապ ունի Ալեքսանդրիա քաղաքի հետ: Խոսելով եգիպտական Ալեքսանդրիայի մասին, Դիոդորոս Սիկկիացին շեշտում է, որ «այն գտնվում է Փարոս կղզուն մոտիկ շատ հարմար վայրում»²⁶, Ասում են, որ Ալեքսանդրը հրամայեց հատուկ պատվարով կղզին միացնել ցամաքին և Ալեքսանդրիայի նավահանգստին²⁷: Ըստ առասպելի, այստեղ էր բնակվել Պրոտեսը (Προτεσος), հունական դիցաբանության մեջ՝ ծովային աստվածություն, Պոսեյդոնի ուղեկից ծովային ծերուկ պատգամախոս ու գուշակը, որոշ դեպքերում՝ Պոսեյդոնի որդին, որը թագավորեց և ապա թաղվեց նույն այդ կղզում²⁸: Ըստ անտիկ պատմագրության, Պրոտեսն էր, որ արտասանելով Իլիականի տողերը Փարոս կղզու մասին, երազում Ալեքսանդրին մատնացույց արեց կառուցվելիք քաղաքի տեղը, որը ստիպեց վերջինիս բացականչել, թե Հռոմեոսն ի լրումն ամենի, նաև իմաստնագույն ճարտարապետ է, և անմիջապես կարգադրեց քաղաքի հատակագիծը:

Պրոտեսը Ալեքսանդրիա քաղաքի կոռեբորից էր, և այդ ակնարկող նախադասությունների առկայությունն էլ Աղեքսանդրի վեպում, համանման այլ իրողությունների հետ դրդել է մասնագետներին նշմարելու Ալեքսանդրիայի հետ վեպի ակնառու կապը²⁹ և նրանում դրսևորված «եգիպտական հայրենասիրության թեման»³⁰:

Եվ, վերջապես, մեր քննարկած հատվածը ընթերցողին լիովին հասկանալի դարձնելու համար մնում է նաև անդրադառնալ խորհնացու օգտագործած «Սանդարամետ» (նաև՝ Սանդարամետապետ) բառի այն նրբիմաստին, որ պատմահայրը նկատի է ունեցել այստեղ, և որը չի ընկալվել ժամթագրողների կողմից: Անտեսելով տվյալ կոնտեքստի բովանդակային յու-

²⁵ Նույն տեղում, էջ 126:

²⁶ C. Müller. Arriani anabasis..., p. 31.

²⁷ Նույն տեղում, տողատակ № 9:

²⁸ Дниодор. Историческая библиотека.—В кн.: Арриан. Поход Александра. М.—Л., 1962. XVIII, 52.

²⁹ Страбон. География, М.—Л., 1964, 17, 79.

³⁰ Shteyn Реальный словарь классической древности Фр. Любкера. В. 4-й. 2-й изд. Ленинградского университета. М., 1979, էջ 27:

³¹ Հ. Տաշյան, Ուսումնասիրությունք..., էջ 15:

³² Античный роман, с. 211.

բահատկությունը, վերջիններս տվել են բառի ընդհանուր քրեստոմատիական բացատրությունը՝ «ստորերկրյա իշխան» (Մ. էմին, Խ. Ստեփանյան)³³, «ստորերկրյա աշխարհը, որտեղ մնում էին մեռած մարդկանց հոգիները, ուրեմն՝ համապատասխան հունաց Պղտոնին» (Ստ. Մալխասյան)³⁴ և այլն, նրկատի ունենալով բուն դժոխքը։ Իրականում այս մասնավոր դեպքում ակնարկվում է Պոսեյդոնը՝ ծովերի արքան, և ոչ Պլուտոնը։ Չէ՞ որ, ինչպես տեսանք, խոսքը Պոսեյդոնի որդի Պրոտևսի մասին է։ Մեր կարծիքը ստուգելու համար դարձյալ դիմելով Խորենացու սկզբնաղբյուր երկին՝ Աղեքսանդրի պատմությանը, «Սանդարամետ» կամ «Սանդարամետապետ» բառի փոխարեն նույն տեղում կարդում ենք «Սարապիս» անունը։ Իսկ Սարապիսը՝ Ալեքսանդրի քաղաքի առտվածությունը, ինչպես հայտնի է, լինելով պտղաբերության, բնության տարերքի և անդրշիրիմի աստված, նաև ծովային աստված էր, հնդեղնների տիրակալ և այդ իմաստով նույնացվել է բուն Պոսեյդոնի հետ³⁵։ Սարապիսը նաև ապագայի գուշակ էր, և Սարապիսի տաճարում, համաձայն Աղեքսանդրի պատմության, հնչեց Ալեքսանդրիայի կառուցման աստվածային պատգամը։

Մատենագրական շատ փաստեր, որ ի հայտ են գալիս Աղեքսանդրի վեպի և «Հայոց պատմության» զուգադիր քննությամբ, հավաստում են ավանդական այն պատկերացումը, որ այս անտիկ վեպը հելլենաստիկ խորհրդանշան համար, իրոք, ծառայել է նաև իբրև օրինակ գրական վսեմ ոճի և պատկերավորության, որին բազմիցս դիմել է քերթողահայրն իր նկարագրություններում։ Խորենացու ընտրությունը՝ իբրև գեղագիտական կողմնորոշում, պատասխան է։ Պարզվում է, որ հարյուրամյակներ շարունակ աշխարհի շատ ժողովուրդների ընթերցանության սիրված գրքերից մեկը, «հելլենիստական գաղափարների հանրագիտաբան» դիմվող այս ստեղծագործությունը, որ բանաստեղծական, հեռտրական և գեղարվեստական այլ ոճերի ճշիւ խճանկար է, բանահյուսական, դիցաբանական, հրաշապատում, դեհակտիկ մոտիվների յուրատեսակ հյուսվածք՝ առատորեն հեղեղված դասական համարվող նկարագրություններով, անջնջելի հետք է թողել իր քանդակավոր հայ թարգմանչի գեղագիտական ընկալումների, լեզվի և ոճի վրա։ Դրանք որոշ վկայությունների։

Աղեքսանդրի պատմության «արագութեամբ առանել քան զՊեգասիոս և քան զԱրիստինայն, զի և Լամմենտեայ (աղավաղված է. պետք է լինի «Լամմեդեայ») — 2. Ս.) բերեալ»³⁶ դարձվածք, օրինակ, պատմահորը հիշեցնելով իրեն քաջ հայտնի և սիրելի հունական դիցաբանության պերսոնաժներին՝ Պեգասոս թևավոր նժույգին, մարդկային լեզվով բարբառող Արիստոս աստվածային երիվարին, Տրոյայի թագավոր Իլիոսի և էվրիպիդեսի որդի, Պրիամոսի հայր Լամմեդոնի հրաշալի ձիերին և սրանք հետ կապված չքանաղ առասպելները, դրդել է նրան իր «Հայոց պատմության» «Օդագնաց» երկու ձիերի նկարագրության մեջ դիմել այս համեմատության բառացի մեջբերման։ «Թեթև առանել քան զՊիգասոս, երագութեամբ անբալ»³⁷, որի ուղղակի կապը Վեպի հետ կասկած չի հարուցում³⁸։

Աղեքսանդրի պատմության, իբրև միջնորդ աղբյուրի օգտագործման ուղագրով օրինակ է «Հայոց պատմության» գեղեցկագույն կտորներից մեկը՝ Բակուր իշխանի տանը Տրդատ Բագրատունու հյուրընկալվելու և խնջույքի ժամանակ նազինիկ հարձի առիթով ծագած կռվի բարձրարվեստ։

³³ История Армении Моисея Хоренского, с. 283. Մովսես Խորենացու հայկական պատմություն, էջ 277։

³⁴ Մովսես Խորենացի. Հայոց պատմություն. Երևան, 1961, էջ 408—409։

³⁵ Նույն տեղում։

³⁶ Պատմություն Աղեքսանդրի Մակեդոնացու, էջ 93։

³⁷ Մովսես Խորենացի. Հայոց պատմություն. 1981, էջ 193։

³⁸ Պատմություն Աղեքսանդրի Մակեդոնացու, էջ 525, ծան. 43։

նկարագրությունը: Եվ ահա, մասնավորապես նրա մի նախադասությունը՝ «Եւ անդ էր տեսանել նոր զոմն Ողիսևս՝ զՊեննելուպայ զսեղեխս սատակելով, և կամ զՂապիթեայցն և զՅուշկապարկացն կռիւս ի վերայ Պերիթեայ հարսանեացն»³⁹, իր լեզվական ատաղձով և հունական հանրահայտ առասպելի հիշատակումով հատկապես նման կոնտեքստում, դարձյալ թելադրում է, որ հատվածը շարագրելիս պատմահայր մտապատկերում համեմատություններ ծագել է ոչ ինքնակա ձևով, այլ յուրահատուկ բնույթով՝ իբրև հարասություն իր իսկ թարգմանած Վեպի համանման մի հատվածի, որտեղ ևս նշված առասպելը բերված է նույն՝ գեղարվեստական պատկերավորության նկատառումով: Անդրադառնալով հոր երկրորդ ամուսնության հանդեսին վերադարձնելու ստացած Ալեքսանդրի հրահրած մոլեգին կովին ու կոտորածին, վեպի հեղինակը բառացիորեն ասում է. «Եւ էր դէմ յանդիման տեսանել Ղապիթեայցն և Ղյուշկապարկացն կռիւս ի վերայ Պերիթեայ հարսանեացն... Եւ անդ էր տեսանել նոր ռմն Ողիսևս և զՊեննելուպայ սեղեխսն, զի սատակելով ելաներ արտաքս...»⁴⁰:

Նկատվող կապի առավել ցայտուն օրինակ են «Հայոց պատմության» մեջ հանդիպող բազմաթիվ նամակները, ուղերձները և, մասնավորապես, Աբգարի թղթերը, որոնցում պատմահայրը յուրովի արժարժում է դադափարական շատ դրույթներ, սեփական հայեցողությունը պատմության, ազգության քաղաքական-հասարակական առաջնահերթ խնդիրների մասին: Կով ծանոթ լինելով գրական հիշյալ հնարանքին, խորհնացին հետևողականորեն օգտվում է դրանից, պատմությունը շարագրողի իր ոճական համակարգում որոշակի տեղ տալով պատմմին ինտոնացիոն աշխուժություն, ուրույն երանգավորում, երբեմն պատմական հավաստիության և նպատակամետության շեշտադրումներ հաղորդող գրական այս վաղեմի ձևին: Հայտնի է, որ նամակները նաև Աղեքսանդրի պատմության կառուցվածքային հենքի քաղաքականներից են, և որ նրանց առատությունը պատահական չէր հատկապես հելլենիստական դարաշրջանում, երբ նամակը դարձել էր գրական կարևոր մի ժանր, իսկ գրական ստեղծագործության կարևոր հատկանիշը, ըստ Տարնի՝ էպիստոլյար ոճը⁴¹: Վեպը հորինողը պատմական ավանդույթին զուգահեռ շրջանառության մեջ է դնում նաև նամակագրական հարուստ նյութը, որի ակունքները հասնում են մինչև եգիպտական պապիրուսները: Փոխադարձաբար նամակներ են հղում վեպի բոլոր կենտրոնական հերոսները՝ Ալեքսանդր, Արիստոտել, Փիլիպոս, Օլիմպիադա, Դարեհ, Հոռքսիանե, Պոլրոս և ուրիշներ:

Արդ, ինչ վերաբերում է բուն Աբգարի թղթերին, ապա այստեղ Աղեքսանդրի պատմության հետ սրանց հաճախ բառացի նույնությունների հասնող ընդհանրություններն այն աստիճան ակնառու են, որ նրանցից մեկի՝ «Ողջ լինել ձեզ ըղձամ» կրկնվող դարձվածի առիթով Հ. Տաշյանին թույլ են տվել նկատելու պատմահայր ոճական հավաքությունը և նույնիսկ ասելու, թե խորհնացին այս արտահայտությունը «ճարտարությամբ գողցած է Աղեքսանդրի վարուց մեջեն»⁴²: Ի դեպ, նկատենք, որ այս կարգի ոճական ընդհանրությունների՝ իբրև գեղարվեստական աղբյուրների, իրական արժեքը և տեղը խորհնացու պատմագրական համակարգում ճշտորոշելու համար ուշագրավ են ակադ. Գ. Սարգսյանի դիտողությունները: Ինչպես համոզիչ կերպով ցույց է տալիս գիտնականը մի մասնավոր օրինակի՝ պաշարված տիրապետության և օրհանգիստի Շապուհ II-ի և Տյուրսսի բնակիչներին Ալեքսանդրի:

³⁹ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, 1981, էջ 195—196:

⁴⁰ Պատմության Աղեքսանդրի Մակեդոնացու, էջ 114:

⁴¹ В. Тарн. Эллинистическая цивилизация. М., 1949, с. 263; Б. Г. Гафуров. Д. И. Ибн Букки и с. Александр Македонский и Восток. М., 1980, с. 412.

⁴² Հ. Տաշյան. Ուսումնասիրություն... էջ 52, Պատմության Աղեքսանդրի Մակեդոնացու, էջ 528, ծան. 59:

հղած նամակների համեմատական քննությամբ, նկատվող կրկնությունները չեն խաթխում պատմահոր հաղորդածի ընդհանուր-պատմական հավաստիությունը, որը պետք է փնտրել ոչ թե «համընկնող տեղերի», այլ Խորենացու ինքնուրույն տարբերակվող շարադրանքի մեջ⁴³։

Մովսես Խորենացին բոլոր առումներով եզակի դեմք է մեր մատենագրության մեջ։ Սխալված չենք լինի, եթե ասենք, որ համապատասխան հայեցակետով նրա գրական ժառանգության մանրազնին քննությամբ պատմահայրը մեզ է ներկայանում մի նոր ուշագրավ կողմով, որ այս դեպքում ձև ակունքային նշանակություն ունի հայ դպրության համար առհասարակ՝ լինելով Մեսրոպ Մաշտոցի ընտրյալ աշակերտը, նա կարծես յուրովի կրկնում է իր բազմաշնորհ ուսուցչին, իբրև իր խոսքերով՝ «ամենիմաստ արվեստի տեր» անձնավորության, սեփական անձի մեջ համատեղելով պատմագրի, թարգմանչի, բանաստեղծի, լեզվագետի, երաժշտի, բարոյախոսի, քաղաքագետի անհրաժեշտ հատկանիշներ, այս բնագավառներում հանդես գալով ոչ միայն թեզեր առաջադրողի, այլև գործնական կիրառողի դերում։ Մասնավորապես, Աղեքսանդրի պատմության նման բազմաբարդ, չեզվական առումով դժվարագույն երկի՝ թարգմանությանը ձեռնամուխ լինելով մեր դպրության արշալույսին, երբ նոր-նոր էին մշակվում գրավոր լեզվի բերականակն, ոճական համակարգերը, թարգմանական սկզբունքները և այլն, Խորենացին հրեթացս աշխատանքի, բուն թարգմանության հարուցած խնդիրները լուծելու նպատակով տեղնուտեղը ստեղծում է բազմաթիվ ոճեր, ոճական դարձվածներ, հունարեն անձանոթ բառերի հայերեն համարժեքներ, կատարում բառապատճենումներ ու փոխառություններ, հայ ընթերցողին օտարոտի իրողությունների համար հորինում նոր բառաձևեր և այլն, որոնց քննությունը ինքնակա խնդիր ընկելով, ներկա հոգվածի նպատակներից դուրս է⁴⁴։ Նկատենք միայն, որ ականարկված նորաբանությունների մի զգալի մասը, լայն ճանաչում գտնելով և հաստատուն տեղ գրավելով հայերենի լեզվական համակարգում, մեզ են հասել ոչ միայն հենց իր՝ Խորենացու կիրառություններով, այլև հետագա հայ պատմիչների, մատենագիրների ու տաղերգուների երկերով։ Հիշենք, թեկուզ, հայ մատենագրության մեջ հայտնի «մերկիմաստասէր» դիպուկ բառը, որ հմտորեն կերտել և շրջանառության մեջ է դրել Խորենացին՝ իբրև համարժեք հունարեն

γυμνο-σχιζοταί-ի⁴⁵։

Աղեքսանդրի պատմության հետ Խորենացու դրսևորած լեզվական ընդհանրության մի ուշագրավ դրսևորում է «հանգոց ի հանգոց» (հաջորդաբար, հերթագայությամբ—Հ. Ս.) դարձվածը՝ «այս անսովոր ոճը», որ անցյալում իր վրա է բեռել մի շարք մասնագետների ուշադրությունը՝ Հայկազյան բառարանի հեղինակներ, Ն. Բյուզանդացի, Հ. Տաշյան, Ստ. Մալխասյան⁴⁶, բոլոր դեպքերում բացառապես այս առնչությամբ։ Հ. Տաշյանը

43 Գ. Մ ա Ր զ յ ա ն. Աղբյուրների օգտագործման եզանակը Մովսես Խորենացու մոտ.—«Բանբեր մատենադարանի», № 3, 1956, էջ 36—42։ Ն ու յ ն ի՝ Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին. Երևան, 1966, էջ 223—224։

44 Այս մասին տե՛ս մանրամասն Հ. Մ ի մ ո ն յ ա ն. Խորենացին որպես թարգմանիչ.—«Լրագրեր հասարակական գիտությունների», 1991, № 3։

45 Հույները գիմնոստիկոսներ՝ մերկիմաստասերներ էին անվանում Հնդկաստանի բարձրագույն կաստայի՝ բրահմանների ներկայացուցիչներին, քանի որ նրանք հանդերձանք չէին կրում, ապրում էին բաց երկնքի տակ, սնվում էին բույսերով և անտառային պտուղներով։ Պատմական աղբյուրներից հայտնի է, որ Ալեքսանդրը Հնդկաստանի Տաքսիլ քաղաքում հանդիպեց բրահմաններին և փիլիսոփայական երկար զրույց ունեցավ նրանց հետ։

46 Նոր բազիրք հայկազեան լեզուի. Գ. Բ, Վենետիկ, 1837, էջ 58։ Ն. Բյուզանդացի. Փննասէր. Ստոկհոլմ, 1889, № 2, էջ 3, 37։ Հ. Տաշյան. Ուսումնասիրությունք..., էջ 149։ Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե Ն Ա Յ Ի. Հայոց պատմություն, 1981, էջ 356, ծան. 171։ Ի դեպ, 7 «Հանգեա», № 2

նկատված աղերսի խորագնա հետքերը քննելով, վերջիններս տեսնում է անհամեմատ լայն ֆոնի վրա՝ ոչ իբրև երկու հուշարձաններում առկա սոսկ բառական կրկնություն, այլ իբրև նրանց առանձին դրվագների հորինվածքային բնույթի ընդհանրություն։ Ահա Աղեքսանդրի պատմության համապատասխան ՃԺԶ հատվածը. «Բայց զնոյն ինքն զԴարեհ գիշերն ապրեցոյց և առ այսոքիւք ձի կալեալ բազում և նոր, ի հանգոց ի հանգոցէ փախչէր։ Եւ մակեդոնացիքն, հասեալ ի կողմն պարսից՝ բանակէին և մէջ գիշերի եղեալ ի վերայ դիականցն աւթագանէին։ Եւ Աղեքսանդր հասեալ ի վրանն Դարեհի, էջ և ի նմա մտեալ, բնակեաց»⁴⁷։ Խորենացին, ինչպես նա այդ անում է ոչ սակավ դեպքերում, վեպից պատշաճ հարմարեցումով վերցրել է իրեն պետք եղած կտորը, որը «Հայոց պատմության» մեջ ունի հետևյալ տեսքը. «Եւ Երուանդ ձիովն իւրով բովանդակ ասպարէզս անցեալ՝ ելանէ ի խանս կարգեալս ի բանակէն իւրմէ ի քաղաքն իւր, հեծեալ ի նոր ձիս հանգոյց ի հանգոցէ փախչել ... Եւ Մարաց զօրացն անցեալ ի կողմն երուանդական գնդին, նսեմաւ ի վերայ դիականցն բանակէին։ Իսկ Արտաշեսի հասեալ ի Երուանդայ շրջապատեալ առագաստն, ի կաշեայ և ի կտաւեայ պարսպին, էջ, և ի խորանի նորա բնակեցաւ զայն գիշեր»⁴⁸։

Պատմիչի այս կարգի գեղարվեստական որոնումները՝ իբրև խորապես գիտակցված, զուտ գեղագիտական նպատակներ հետապնդող սկզբունքի դրսևորումներ, չի կարելի գնահատել այլ կերպ, եթե ոչ պատմական երկի այնպիսի, ըստ էության, ծրագրային մոդելի մշակում, որն արդեն V դարում հստակ սահմանագծի վրա է դնում հայկական դասական պատմագրությունը, որում, ինչպես վկայում են փաստերը, իբրև օրինաչափություն միևնույն համակարգում պատմականն ու գեղարվեստականը հանդես են գալիս ներհյուսված։ Աղեքսանդրի պատմությունից, ինչպես և պատմահորը սիրելի այլ երկասիրություններից (Պիտոյից գիրք, Գրիգոր Նազիազանցու, Պլատոնի երկերը և այլն) գեղարվեստական տարրերի հոսքը «Հայոց պատմության» էջերը, ինչպես նշեցինք, չի խաթարել նրան հատուկ պատմականությունը։ Պատահական չէ, որ Թերե քաղաքի գրավման (Աղեքսանդրի պատմություն) շարադրանքի բացահայտ նմանությունների առիթով Բ. Սարգիսյանը նկատում է երևույթի ներքին բովանդակությունը, այլ խոսքով, այն, որ մակերեսային հայացքի դեպքում կարող է խորենացու նկատմամբ մեր վստահությունը նվազեցնել, իսկ իրականում սկզբնաղբյուրի մեջ ձիւրըրած փոփոխությունը միաբան են պատմութեան»⁴⁹։ Զմոռանանք, որ փաստերի գեղարվեստական շարադրման սկզբունքին հետևում էին այնպիսի դեմքեր, ինչպիսիք են Հերոդոտոսը, Քուկիդիտեսն ու Տակիտոսը⁵⁰։

Մեղ համար աներկբայելի է, որ խորենացու թարգմանչական աշխատանքի մանրագնին քննության արդյունքները երբեմն կարող են հաճելի անակնկալներ մատուցել նաև «Հայոց պատմության» օտար թարգմանիչներին՝ անսպասելիորեն օգնելով նրանց այս կամ այն բառի ճշգրիտ համարժեքը որոնելիս։ Ահա, մեր կարծիքով, նման մի դիպուկ օրինակ, որի վրա հատուկ ուշադրություն ենք հրավիրել Աղեքսանդրի պատմության բնագրերի կապակցությամբ։ Ինչպես ցույց տվեց վերջիններիս համեմատությունը հունա-լատինական նախօրինակների հետ, խորենացին իբրև թարգմանիչ երբեմն-երբեմն անհրաժեշտ է համարել կատարել որոշ մասնակի հավելումներ առանձին բառերի կամ կարճառոտ դարձվածների ձևով, որոնց նըպատակը եղել է հայկական միջավայրում դրսեկ հուշարձանի դյուրին ըն-

Հայկադան բառարանում շփոթմամբ խորենացուց բերված օրինակը վերագրված է Կալիսթենեսին, իսկ Կալիսթենեսինը՝ խորենացուն։

⁴⁷ Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ, էջ 160։

⁴⁸ Նույն տեղում։

⁴⁹ Մովսիսի խորենացոյ Պատմութիւն Հայոց. 1913, էջ 172։

⁵⁰ Ф. Шахермайн. Александр Македонский. М., 1984.

թերցումը և, առհասարակ, նրա տեղայնացումն ու սեփականումը: Նկարագրելով Ալեքսանդր Մեծի գալուստը Հնդկաստան, Կալիսթենեսը պատմում է, թե ինչպես արքան ե նրա զորականները այցելեցին տնկախիտ մի վայրում գտնվող լուսնի և արեգակի հեթանոսական մեհյանը, որի մոտ աճող «սուրբ» ծառերից եկող ձայների միջոցով տեղի քրմերը գուշակություններ էին անում: Բավական մանրամասն նկարագրվում են նաև այդ պատգամատու ծառերը՝ մեկը արու (արեգակ) և մյուսը՝ էգ (լուսին), որ «բարձր էին անշափ ե էին հաւասար միմեանց»⁵¹: Հունարեն նախաբնագրում կա այդ ծառերը բնութագրող մի խոսք՝ «կիպարիսների շատ նման» (καπαρισιανών)⁵², որի դիմաց հայերենը համապատասխանաբար տալիս է «որք էին հաւասար սարեւացն (նաև՝ սարոյց, սարոցն) ծառոցն, որ առ մեզ լինին»՝ նախադասությունը⁵³: Թարգմանչի նախընտրած «սարոյ (սարոյց)» բառը՝ առաջացած «սար» բառից, որ հետագայում գրիչների կողմից կրել է շատ բնական փոփոխություններ (սարոցն, սարերացն և այլն), Հայկազյան բառարանի կողմից բացատրվում է ընդհանուր ձևով՝ իբրև առհասարակ վայրի տունկ, լեռնային ծառ, նույնազգի ծառերի խումբ՝ սարդ, գի, թեղոշ, կաղամախի, այս բոլորը, սակայն, հանգեցնելով հունարեն նույն «կիպարիս» բառիմաստին: Ուրեմն, իրավ է, որ թարգմանիչը ընտրել է բնագրին միանգամայն համարժեք բառ, չթողնելով որևէ առարկության տեղիք: Առավել հետաքրքիր է այն, որ վեպի հայերեն բոլոր խմբագրություններում անխտիր հետևում է «իբրև զծալս, որ առ մեզս են»⁵⁴, «հաւասար այսմ ծառոցն, որ առ մեզս են»⁵⁵ դարձվածները՝ շարահյուսական մասնակի տարբերություններով: Հ. Տաշյանը սա համարում է «հավելված», և թեպետ սրանով էլ սահմանափակվում է, դժվար չէ ենթադրել, որ խոսքը նախաբնագրում բացակայող հայկական հավելման մասին է: Եվ, իրոք, դա այդպես է: Ավելին, ելնելով ձեռագրերում հավելվածի ընդհանրական, կայուն ու մշտական առկայությունից, կարող ենք պնդել, որ գործ ունենք ոչ թե գրչական պատահական ծանուցման, այլ թարգմանչի հատուկ լրացման հետ, որն իբրև բնագրային անբեկանելի միավոր անկորուստ հասել է մեզ: Ուսումնասիրողին, որը ծանոթ է Խորենացու, իբրև թարգմանչի, գիտական խիստ սկզբունքներին, անշուշտ, հետաքրքրում են նրա կողմից բնագրին միջամուխ լինելու բոլոր սակավաթիվ դեպքերը՝ իբրև ներքին իմաստ ունեցող փաստեր: Արդյոք «սարոյց» բառի տակ Հայաստանում աճող որոշակի ո՞ր ծառատեսակը նկատի ունի Խորենացին: Ելնելով վեպի և Խորենացու «Հայոց պատմության» շնկատված որոշ ընդհանրություններից, կարող ենք եզրակացնել, որ պատմահայրն իր՝ թարգմանչի, հավելման տակ նկատի է ունեցել ոչ այլ ինչ, եթե ոչ՝ հայերին քաջածանոթ առաջին ծառը: Որ, իրոք, սոսին դեռևս վաղնջական ժամանակներից աճել է Հայաստանում և երկար ժամանակ օգտագործվել ծիսական վերոհիշյալ նպատակներով ու պաշտամունքի առարկա եղել, վկայում է Խորենացին «Հայոց պատմության» առա-

51 Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), ձեռ. № 10151, էջ 77 ա:

52 C. Müller. Arriani anabasis... p. 123.

53 ՄՄ, ձեռ. № 5472, էջ 293:

54 ՄՄ, ձեռ. № 10151, էջ 78 ա:

55 ՄՄ, ձեռ. № 10448, էջ 173 ա:

շին գրքի ի գլխում: Խոսելով Արայի որդի Սոսանվեր Անուշավանի մասին, նա ասում է. «Արայի հանձն Արայ մեռանի ընդ Շամիրամայ ի պատերազմին, թողլով արու զաւակ ամենահարուստ և շատահանճար յիր և ի բան՝ զԱնուշավանն Սոսանուէր: Քանզի ձոնեալ էր ըստ պաշտամանց ի սօսիսն Արամանեկայ որ յԱրմաւիր. զորոց զսաղարթուցն սօսաւիւն, ըստ հանդարտ և կամ սաստիկ շնչելոյ օդոյն, և թէ ուստի շարժումն՝ սովորեցան ի հմայս յաշխարհիս Հայկազանց, և այս ցբազում ժամանակս: Ուրեմն պատմահայրը լիովին իրավունք ունիւր վեպի՝ իր թարգմանութեան մեջ նման մի հաւելում կատարելու իր նախնաց սրբագործած սոսի ծառի մասին: Խորեն Ստեփաննէն հիշում է Վահի քրմաբնակ Արմավիր քաղաքի, Երասխ գետի մոտ սոսու ճնշիրական՝ անտառի գոյութիւնը, ուր հեթանոս հայերը պաշտամունքային ծեսեր էին կատարում⁵⁶: «Հնագույն այլ փաստեր ևս (մ. թ. ա. IX—VI դդ. որմնակարներ և այլն) արեւելագետ Մ. վան Լուինն ենթադրել են տվել, թե սոսի ծառը նվիրաբերված է եղել Արարատյան թագավորութեան գրիսավոր աստվածութեանը՝ Խալդին: Այս ենթադրութիւնը գիտական նոր փաստերով վերջերս հաստատել է գերմանացի արեւելագետ Պետեր Կալմայերը, նկատելով, որ «այդ սուրբ ծառը Մովսէս Խորենացու նկարագրած սոսին է, որով հին հայերը գուշակութիւններ են արել»⁵⁷: Եվրոպացի գիտնական Լեյարդը գտնում է, որ սոսի ծառը կիպարիսն է: Նույն ճշմարիտ մոտեցմամբ Աղեքսանդրի պատմութեան լատիներեն թարգմանութեան մեջ «կիպարիս» է թարգմանված: Որ Խորենացին, իրոք, այդ ընկալումն է ունեցել, և, մանավանդ, «սարոյ» բառի տակ հասկացել է նույն սոսի-կիպարիսը, վերջնականապէս ապացուցում է իր թարգմանութեան մի այլ փաստով. «Վեպի հաջորդ հատվածներից մեկում կրկին հանդիպելով «կիպարիս» բառին, այս անգամ այն թարգմանում է «սաւսիկը»⁵⁸:

Այսպիսով, Աղեքսանդրի պատմութեան խորենացիական միջամտութեամբ կրկին հավաստվում է հին Հայաստանում սոսի ծառի պաշտամունքային նշանակութեան մասին պատմահոր արդեն ակնարկած իրողութիւնը և, մյուս կողմից, ճշգրտվում «սարոյ» բառի միջնադարից ավանդված ստույգ իմաստը՝ իբրև սոսի ծառ, տարբերակելով այն նույնազգի այլ ծառերի ու տնկիների անվանումից: Եվ, վերջապէս, Խորենացին ինքը լուծում է իր «Հայոց պատմութեան» եվրոպացի թարգմանիչների վեճը՝ «սոսին» թարգմանել իբրև «կիպարիս» (նոճի), «կաղամախի», թե՛ «չինարի», մատնացույց անելով առաջին՝ «կիպարիս» բառը:

Խորենացու սկզբնաղբյուրների գիտական ուսումնասիրութիւնը, որ կյանքի է կոչվել պատմահոր խոսքի հավաստիութեան և ներքին խոր իմաստի հայտնաբերման որոշակի մղումով, ուղղված է ոչ միայն «Հայոց պատմութեան» գիտական նշանակութեան բացահայտմանը, այլև հիմքեր է տալիս V դարի երկրորդ կեսին Հայաստանում ստեղծված և հետագա դարերում պահպանված մտավոր-մշակութային մղումների մասին շատ ավելի ընդհանուր եզրահանգումների համար:

⁵⁶ Մովսէս Խորենացու Հայկական պատմութիւն, Ժանոթութիւններ, էջ 85:

⁵⁷ «Հայրենիքի ձայն», 11-ր ապրիլի 1985:

⁵⁸ ՄՄ, ձեռ. № 10151, էջ 85 ա, հմմտ. ձեռ. № 10448, էջ 215 ր:

ОБ ОДНОМ ИСТОЧНИКЕ «ИСТОРИИ АРМЕНИИ»
МОВСЕСА ХОРЕНАЦИ

А. А. СИМОНЯН

Резюме

Наиболее яркой особенностью Мовсеса Хоренаци как мыслителя и историографа является скрупулезный подбор и исключительно глубокое, всестороннее знание исторических источников. Привлекают внимание творческие связи его труда с «Повестью об Александре Македонском» Псевдо-Каллисфена. Хоренаци не только перевел это классическое произведение, тем самым заложив начало переводной художественной прозы в Армении, но также своеобразно воплотил в «Истории» его идейно-художественное наполнение. Хоренаци высоко ценил героический настрой этого произведения, его политические устремления и подчеркнутую идею государственности, которые он считал необходимым передать своему народу в переломный момент его истории. Ряд неясностей в «Истории Армении» Хоренаци разъясняется путем сравнительного анализа первоначальных греко-латинских версий и армянского перевода «Повести». Этим способом, к примеру, выясняется, что слово Prodiad, встречающееся у Хоренаци в описании города Александрии, является склоненной формой имени древнегреческого морского божества Протея, следовательно, выражение Prodiada k i zi означает «остров Протея». Уточняется также одно из значений слова sandarametapet—«Посейдон», а не «подземный князь», как считалось ранее. Приведенные примеры подтверждают, что художественная установка Хоренаци на «Повесть об Александре» не затрагивает общую достоверность его сообщений в «Истории Армении», а выявляет ту модель армянской историографии, где историческое и художественное предстают во взаимном переплетении. Исследование «Повести об Александре» может способствовать также более точному переводу некоторых мест «Истории» Хоренаци на другие языки.